

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Վ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

Ք. Վանաձոր

12.08.2014թ. ժ.11⁰⁰

Նիստը նախագահում էր «Վ Լոռու մարզպետ, «Վ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Լոռու մարզային հանձնաժողովի նախագահ պարոն Արթուր Նալբանդյանը:

Մասնակցում էին «Վ Լոռու մարզպետի տեղակալը, «Վ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Լոռու մարզային հանձնաժողովի անդամները, Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ԶԼՄ-ների ներկայացուցիչները:

Ներկա էին «Վ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, «Վ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ պարոն Ստեփան Մնացականյանը, «Վ վիճակագրության պետական խորհրդի անդամ, «Վ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդամ, գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգող պարոն Գագիկ Անանյանը, «Վ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ստորաբաժանումների ու գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՎՎ) վարչության աշխատակիցներ Վարդան Գևորգյանը, Արսեն Ավագյանը, Գոհար Նշանյանը և Ռաֆայել Շահգուլյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը և կարևորությունը:
2. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման աշխատանքների ընթացքը:
3. Մարզային հանձնաժողովի և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին.

ա) հաշվարարների թեկնածուների ներկայացում

բ) գյուղապետարանների, դպրոցների, մանկապարտեզների կամ այլ հանրային բնույթի շենքերում ժամանակավոր՝ **մինչև 3** (հրահանգչական տեղամասերի) և **4** (հաշվառման տեղամասերի) ամիս տևողությամբ սենյակների տրամադրում

4. Այլ հարցեր (հարց ու պատասխան):

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող, ՀՀ Լոռու մարզպետ պարոն Արթուր Նալբանդյանը:

Նա ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց աշխատանքը սկսել համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ներկայացված օրակարգի: Օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնելու համար նա խոսքը տվեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին:

Ս.Մնացականյանը շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին, անդամներին, համայնքների ղեկավարներին և մյուս մասնակիցներին մարզային հանձնաժողովի նիստին մասնակցության համար ու առաջարկեց սկսել աշխատանքը համաձայն օրակարգի:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը (համակարգչային ներկայացմամբ 16 պատկեր համառոտագիրը, որը կցվում է) ըստ հերթականության ներկայացվեցին պարոն Ս. Մնացականյանի կողմից:

Ս.Մնացականյանի կողմից հատուկ առանձնացվեցին այն հիմնահարցերը, որոնք առաջնահերթ են ԳՀՀ նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում:

Այնուհետև Ա. Նալբանդյանի և Ս. Մնացականյանի կողմից առաջարկվեց անկաշկանդ քննարկել հետաքրքրող ցանկացած հարց: Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքների ղեկավարները և այլ մասնակիցներ:

Հնչեցված հարցերը վերաբերում էին գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին, համայնքներում տնտեսություններին և համայնքին պատկանող հողերի փաստացի չափերի և համայնքների հողային հաշվեկշռի (կադաստրային չափագրումների) համապատասխան ցուցանիշների միջև առկա տարբերությանը (անհամապատասխանությանը), համայնքի համար համատարած հաշվառման անցկացման կարևորությանը, համատարած հաշվառման իրականացման սեղմ ժամկետներին, հաշվառման արդյունքների կիրառական առումով նշանակությանը մի շարք այլ խնդիրներին:

Համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցերին Ս. Մնացականյանը տվեց սպառիչ պատասխաններ:

Պարոն Ա. Նալբանդյանն իր և հանձնաժողովի մյուս անդամների անունից շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին հանգամանալից զեկույցի, բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու համար և նշեց, որ ՀՀ Լոռու մարզում ս/թ հոկտեմբերի 11-ից 31-ը գյուղատնտեսական համատարած հաշվառումը կանցկացվի բարձր կազմակերպվածությամբ: